# ՎԵՐԱՕԾՎԵՑ ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 9 հուլիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ մեկնեց Կոտայքի թեմ՝ հանդիսապետելու Ծաղկաձորի Կեչառիսի վանական համալիրի վերաօծման արարողությանը:

11-13-րդ դարերում կառուցված նշանավոր Կեչառիսն իր հիմնական՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, և մյուս երեք՝ Ս. Կաթողիկե, Ս. Նշան և Ս. Հարություն եկեղեցիներով, եղել է միջնադարյան Հայաստանի կրոնական ու մշակութային կենտրոններից մեկը:

Դեռևս անցյալ դարում երկրաշարժից խոնարհվեցին Կեչառիսի եկեղեցիները: Եվ չնայած խորհրդային փարիներին համալիրը իբրև պատմական հուշարձան գտնվում էր հուշարձանների պահպանության վարչության հսկողության ներքո, սակայն դանդաղում էին վանքի վերականգնման աշխատանքները: Երկու տարի առաջ վանական համալիրն անցավ Մայր Աթոռի տնօրինությանը և, շնորհիվ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի նախանձախնդիր աշխատանքի և վիեննաբնակ Վլադիմիր Հարությունյանի բարերարության, այն կրկին ստացավ իր նախնական տեսքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ նախ գինիով և ապա Սրբալույս Մյուռոնով վերասրբագործվեց ու վերաօծվեց Կեչառիսը: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագը: Պատարագիչն էր Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Հավարտ սրբազան արարողության Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքն ուղղեց բոլոր ներկաներին՝ աղոթելով երանաշնորհ Գարեգին Ա-ի հոգու խաղաղության համար և, գնահատանքի խոսքեր հղելով արարողությանը ներկա բարերար Վլ. Հարությունյանին, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանին, մարզային իշխանություններին ու բոլոր շինարարներին, որոնց աշխատանքի շնորհիվ Կեչառիսի վանական համալիրը կրկին դարձավ աղոթքի տուն: Համոզմամբ, որ առանց բարոյական արժեքների անկարելի է ակնկալել բարօրություն անհատի և ազգի համար, Նորին Սրբությունը հորդորեց հավատարիմ մնալ եկեղեցուն և հայրերի նվիրական հավատքին:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, Կոտայքի մարզպետ Սամվել Ստեփանյանը, բազմաթիվ ուխտավորներ:

Նույն օրը Ծաղկաձորում տեղի ունեցավ նաև Կոտայքի թեմի առաջնորդարանի հանդիսավոր բացումը: Պետական իշխանությունների կողմից Կոտայքի թեմին տրամադրված այս շենքը վերանորոգվել է ԱՄՆ արևելյան թեմի Արժանապատիվ Տ. Մամբրե քհն. Գուզոյանի բարերարությամբ: